Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 31-ի N 87 - Ա որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, և «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս _____-ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ նշված կողմերը միասին՝ կողմեր կամ առանձին՝ կողմ), հիմք ընդունելով կողմերի միջև 2012 թվականի ապրիլի 29-ին ստորագրված համագործակցության հուշագրի (այսուհետ՝ հուշագիր) 7-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի 1-ին կետում «մշակման» բառը փոխարինել «թեստավորման» բառով:
2. Հուշագրի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Նախարարությունը կենտրոնի հիմնադրման ներդրումային ծրագրի իրակա-նացման համար ընկերությանը կնվիրաբերի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հակոբյան փողոցի N 39 հասցեում գտնվող մարզադահլիճը՝ 978.90 քառ. մետր մակերեսով, և սպասարկման համար անհրաժեշտ 0.107748 հեկտար հողամասը:»:

3. Սույն համաձայնագիրը կողմերի միջև 2012 թվականի ապրիլի 29-ին ստորագրված համագործակցության հուշագրի անբաժանելի մասն է:

4. Սույն համաձայնագիրը բաղկացած է 1 էջից, կազմված է հայերենով և կնքվում է 2 հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

5. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրման պահից:

Կողմերի ստորագրությունները

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Տիգրան Դավթյան _____

«Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ